ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 Նոյեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

154
(2820)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ՀԱՐՍՏԱՑԵԼ Է

ՔՊ-ական պատգամավորների հայտարարագրերի ուսումնասիրությունը դրամատիկ բացահայտումների է հանգեցնում: Պատգամավոր Միքայել Թումասյանի ընտանիքն ապրում է տարեկան 2 մլն դրամով. իր կյանքի ամենաեռանդուն 17 տարիներին՝ բանակից զորացրվելուց հետո, նա որեւէ տեղ չի աշխատել: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անհայտ պատգամավոր Միքայել Թումասյանը համալսարանն ավարտելուց հետո 6 տարի անգործության էր մատնված: Նա աշխատանք է ունեցել միայն 2018 թվականին տեղի ունեցած հեղափոխությունից հետո: Մինչ 2018 թվականի հեղափոխությունը Թումասյանի կենսագրությունում կա 3 կետ. ծնվել է 1980 թվականին, 1999-2001 թվականներին՝ 19 տարեկանից, անցել է զինվորական ծառայության եւ 32 տարեկանում՝ 2012 թվականին, ավարտել Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանի՝ արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարության ֆակուլտետը: Իսկ, ահա, հեղափոխությունից հետո կենսագրություն չունեցող Թումասյանի կյանքը գլխիվայր շուռ է եկել. 2018 թվականին նա դարձել է ՔՊ կուսակցության անդամ եւ նշանակվել Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար՝ աշխատելով մինչեւ 2021 թվականը: Որեւէ տեղ չաշխատած Միքայել Թումասյանը Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը ստանձնելիս ունեցել է 1 բնակարան, 1 անհատական բնակելի տուն, 1 Nissan Altima մակնիշի մեքենա եւ 11 մլն դրամական միջոց, սակայն եկամտի աղբյուրներ նշված չկան: Որտեղի՞ց գործազուրկ Թումասյանին այդ միջոցները՝ անհայտ է մնում: Այժմ Թումասյանը ունի մեկ անհատական բնակելի տուն եւ 7 մլն դրամ էլ՝ որպես աշխատանքի վարձատրություն, որը ստանում է Ազգային ժողովի աշխատակազմից: Թումասյանի բանկային հաշիվների մնացորդները տարեվերջին կազմել են 763 հազար դրամ: Բայց պատգամավորը նաեւ վարկ ունի, որի մարմանը 2022 թվականի ընթացքում ուղղել է 5 մլն 545 հազար դրամ: Եվ հարց է առաջանում, թե ինչպես է ապրում Թումասյանի ընտանիքը տարեկան 2 մլն դրամով. այսինքն՝ օրական 5 հազար 400 դրամով: Գուցե պատկերացում լինի, թե կնոջ եկամուտներն են ծածկել անհրաժեշտ ծախսերը, բայց՝ ոչ. Թումասյանի կինն էլ գործազուրկ է: Բայց Տատյանա Մալկովան հայտարարագրել է 2010 թվականի արտադրության Porsche մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերվել 2019 թվականին, երբ Թումասյանը Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարն էր: Կինը, չունենալով ոչ մի եկամուտ, աշխատանք, նաեւ հայտարարագրել է 57 հազար 500 դոլար կանխիկ դրամական միջոց: Նկատենք, որ պատգամավորի կինն էլ եկամտի որեւէ աղբյուր չի նշել: Այսինքն՝ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը հստակ անելիք ունի այս ուղղությամբ: Ապօրինի գույքի փնտրտուքը միայն թիրախավորված նախկինների շրջանում չէ, որ պետք է փնտրել: Ինչ վերաբերում է կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, ապա այն ամբողջությամբ մատնված է պարապուրդի: Հայկուհի Հարությունյանը չի համարձակվում որեւէ ՔՊ-ականի մասով որեւէ գործողություն ձեռնարկել՝ իր պաշտոնեական պարտականություններից բխող:

1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 2023 թվականի ընթացքում մեկը մյուսի հետեւից դատական հայցեր է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի դեմ՝ պահանջելով կայացրած որոշումները անվավեր ճանաչել: Մասնավորապես՝ տեղեկացանք, որ 5 հայց է ներկայացվել հիշյալ մարմնի դեմ, որպեսզի տեսչական մարմինը անվավեր ճանաչի կայացրած որոշումները: Նկատենք, որ «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանում խոշոր վառելիք ներկրող ընկերություն, եւ դեռ ավելին՝ ընդգրկվել է 1000 խոշոր հարկատուների ցանկում, սակայն տարրական հրդեհային անվտանգության կանոնները, ըստ էության, չի պահպանում. պետական օղակների թիրախում է հայտնվել ու ստիպված է դատարաններով կարգավորել հարցերը: Հիշեցնենք նաեւ, որ «Սի Փի Էս Օիլ» ՍՊԸ-ն ստեղծվել է 2007 թվականին: «Սի Փի Էս Օիլ»-ի 100% սեփականատերն ու տնօրենը Արթուր Դանիելյանն է, սակայն, ըստ մեր հավաստի աղբյուրների, «Սի Փի Էս» (CPS) ապրանքանիշի ներքո հանդես եկող բոլոր ընկերությունների իրական սեփականատերը Աշոտ Սալազարյանն է: Նրան է պատկանում «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն»-ի 100% բաժնեմասը:«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն»-ն ու «Սի Փի Էս Օիլ»-ը գրանցված են Երեւանի կենտրոնում գտնվող նույն հասցեում:

ԱԺ պատգամավոր Լիլիթ Ստեփանյանը այսօր մեզ փոխանցեց իր վրդովմունքը, թե «Ժողովուրդ» օրաթերթը նյութ է հրապարակել, որ ինքը տուն է գնել ու միաժամանակ ԱԺ-ից տան վարձավճար է ստացել: «Սուտ. հերյուրանքներ եք գրել: Ես եւ Արփին (նկատի ուներ Արփի Դավոյանին), երբ բնակարան ենք գնել, այլեւս տան վարձավճար չենք ստացել...», - ամենայն պատասխանատվությամբ հայտարարեց պատգամավորը: Կրկին ուսումնասիրեցինք փաստաթղթերը, ՀՀ Ազգային ժողով ուղարկած մեր հարցման պատասխանները, եւ պարզեցինք, որ Լիլիթ Ստեփանյանը 2019 թվականից մինչեւ 2022 թվականը, ամեն ամիս տան վարձավճարի փոխհատուցում է ստացել: Այսինքն՝ նա 2020-ի ապրիլի 1-ին տուն է գնել, բայց եւ 2020-ին, եւ 2021-ին նաեւ տան վարձի գումար է ստացել պետբյուջեից: Իսկ Արփի Դավոյանի դեպքում իրավիճակն ավելի դրամատիկ է. նա 2019 թվականից մինչեւ 2023 թվական՝ հիմա, տան վարձավճարի փոխհատուցում է ստանում ՀՀ Ազգային ժողովի բյուջեից: Այսինքն՝ 2021 թվականին եւ տուն է գնել, եւ տան վարձավճար է ստանում: Եվ մեզ մնում է միայն հավելել, որ ստում էր պատգամավոր Լիլիթ Ստեփանյանը, երբ ասում էր, թե՝ ես եւ Արփին տուն գնելուց հետո վարձավճարի փոխհատուցում չենք ստացել: Ստացե՛լ եք: «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ կան պաշտոնական փաստաթղթեր, որոնք ստացել ենք ՀՀ Ազգային ժողովի լրատվական վարչությունից:

«Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ դատախազության համակարգից ահազանգեր են գալիս առ այն, որ Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը թոշակի գնացող դատախազներին ժամկետից շուտ ազատում է պաշտոններից, որպեսզի նրանք հետագայում թոշակ չստանան: Մասնավորապես՝ համակարգում կան դատախազներ, որոնց թոշակի գնալուն դեռ 5-6 ամիս ժամանակ կա, սակայն նրանք արդեն ազատվել են պաշտոնից: Իրավիճակի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը պարզաբանումներ պահանջեց ՀՀ Գլխավոր դատախազությունից, որտեղից ի պատասխան հայտնեցին. «Դատախազությունում Ձեր կողմից նշված նպատակով ազատումներ չեն լինում: Եթե լինում են ազատումներ (որոնց մասին Գլխավոր դատախազությունը մշտապես իրազեկում է), ապա դրանք տեղի են ունենում բացառապես «Դատախազության մասին» օրենքով նախատեսված հիմքերով»:

ԶՐՈՒՅՑ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏ ԿՈՂՔ-ԿՈՂՔԻ ԿԱՊՐԵ՞Ն

Արցախում էթնիկ զտումներ իրականացրած Ադրբեջանը շարունակում է կեղծ հավաստիացումներ տալ, թե վերադարձի դեպքում պատրաստ է ապահովել արցախահայերի անվտանգությունը:

Ադրբեջանի պետական անվտանգության ծառայության ղեկավար Ալի Նագիեւը Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ հանդիպմանը հայտարարել է, թե Ադրբեջանի կառավարությունը լիովին երաշխավորում է հայ բնակչության անվտանգ ապրելակերպը Ղարաբաղում:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է Արցախի ԱԺ պատգամավոր Մետաքսե Հակոբյանի հետ:

-Տիկին Հակոբյան, Ադրբեջանը շարունակում է հավաստիացումներ տալ, թե վերադարձի դեպքում պատրաստ է ապահովել արցախահայերի անվտանգությունը: Դուք նման նախադրյալներ տեսնո՞ւմ եք, արժանահավատ համարո՞ւմ եք ադրբեջանական կողմի այս խոստումները:

-Թշնամին միջազգային բոլոր հարթակներում իբրեւ խաղաղության հայտարարություններ է անում, որոնք իրականում կեղծ են: Ինչո՞ւ եմ վստահ ասում, որովհետեւ նրանք այլ հարթակներում կամ իրենց վերլուծաբանների միջոցով դրա լրիվ հակառակն են ասում, թե հնարավորություն չկա, որ հայերն այլեւս այնտեղ ապրեն: Մարդ մորթողը, երեխային սպանողը չի կարող երաշխիք տալ խաղաղ կեցության, չի կարող անվտանգություն ապահովել, մենք սեպտեմբերի 20-ին ականատես ենք եղել, թե ինչ կարող է անել ադրբեջանցին, թե ինչպես է բոլորի աչքերի առաջ սպանում երեխայի, խեղդում մահացածի մարմին՝ առանց որեւէ անհանգստության. նման թշնամին չի կարող երաշխիք տալ:

-Դուք պարբերաբար հանդիպում եք արցախցիների հետ. նրանք պատրա՞ստ են Ադրբեջանի տված երաշխիքների դեպքում վերադառնալ Արցախ:

-Այն երաշխիքներով, որոնք ադրբեջանցիներն են տալիս՝ առանց ինքնավարություն ունենալու, դա բացառվում է: Եվլախում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ մինչեւ հունվարի 1-ը որեւէ խնդիր չի լինի, մարդիկ կարող են որոշել մնում են, թե գնում, բայց մենք տեսանք՝ ինչ եղավ, նրանք մի բան ասում են, մեկ այլ բան՝ անում: Իրենք գործով ապացուցեցին, որ մեկ վայրկյան անգամ չեն կարող հանդուրժել հայի, սրանով էր պայմանավորված, որ ցեղասպանության վտանգի ներքո բռնի տեղահանվեցին Արցախում ապրող հայերը:

-Տիկին Հակոբյան, տեսնում ենք, որ ադրբեջանական ագրեսիայից հետո Հայաստան տեղափոխված արցախցիների մեծ մասը լքում են երկիրը, անգամ տարբեր երկրների դեսպանատների դիմաց ակցիաներ են անում, ապաստարան են պահանջում, որ՞ն է սրա պատճառը:

-Մենք շատ ցավալի իրավիճակում ենք հայտնվել, այն զգացողությունը, որ մեր հայրենիքում ենք, կա, գիտակցում ենք, որ այստեղի մեր հայրենակիցները մեզ հետ հավասար հայրենիք են կորցրել, բայց կա մի ցավոտ գիտակցություն, որ Հայաստանի իշխանությունները ամենաքիչը երեք տարի բոլոր գործընթացները տարան այնպես, որ հազարավոր զոհեր ունեցանք, մեզնից խլեցին հայրենիք: Այսինքն՝ կա զգացողություն, որ դու քո հայրենիքում ես, բայց քեզ ատող իշխանությունների ենթակայության տակ. դա դառնում է անհամատեղելի, մարդիկ վախենում են նաեւ, որ այստեղ հետապնդումների կարժանան, եւ իշխանություններն են նման ցրբաժան գծել, դրա համար էլ արցախցիները վախենում են, որ իրենց երեխաները չեն կարող արժանապատիվ ապրել այստեղ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ԳՐՈՒՄ Է

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը ֆեյսբուքյան իր էջում գրում է.

«Արցախից բռնի տեղահանված մեր քույրերին ու եղբայրներին Հայաստանում ապրելու հարցում օգնելը, կարծում եմ, յուրաքանչյուրիս գործն է: Մարդիկ կան՝ դա անում են հրապարակավ, մարդիկ կան՝ լուռ: Ընտրության հարց է. եւ երկու ձեւաչափերն էլ ինձ համար ընդունելի են. գլխավորն արցախահայերին օգնելու պատրաստակամությունն է:

Իբրեւ փոքրիկ հաշվետվություն՝ տեղեկացնեմ, որ սեպտեմբերի 20-ից սկսած 24/7 ռեժիմով զբաղվում եմ արցախահայերի խնդիրներով՝ կենցաղային հարցերից սկսած.

բնակարանների որոնում,

կահավորում (կահույք, տեխնիկա, նորոգման պարագաներ),

ջրաֆիկացում եւ գազաֆիկացում (նպաստում եմ աշխատանքների արագ կազմակերպմանը),

տարբեր սեզոնային հագուստների տրամադրում,

աշխատանքի տեղավորում,

պետական մարմիններ ուղարկված հարցումներ,

մարզերում պարբերական հանդիպումներ Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված կանանց հետ,

աջակցության այլ քայլեր, որոնք կրում են ամենօրյա ռեժիմ եւ անձնական ֆինանսական միջոցներ:

Պետք է շարունակել աշխատանքը, մինչեւ բոլոր բռնի տեղահանվածներն իրենց սեփական բնակարաններն ունենան Հայաստանում»:

ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀՀ-ում Գերմանիայի դեսպան Վիկտոր Ռիխտերն այսօր եկել էր խորհրդարան: Դեսպանն ԱԺ-ում հանդիպում ունեցավ ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի, պատգամավորներ Ռուստամ Բաքոյանի եւ Լիլիթ Ստեփանյանի հետ: Թե դեսպանը եւ ՔՊ-ական պատգամավորներն ինչ հարցեր են քննարկել, պաշտոնական որեւէ տեղեկություն չկա:

Տեսնելով դեսպանին՝ «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց մոտենալ եւ մի քանի հարց ուղղել Արցախի ապօրինի բռնազավթումից, արցախահայերի բռնի տեղահանումից, Հայաստանում ժողովրդավարական անընդունելի բարքերից:

Դեսպանից հետաքրքրվեցինք նաեւ՝ արդյոք տեղյակ է, որ այն պատգամավորները, որոնց հետ հանդիպում է, հայտնի են իրենց սկանդալային վարքուբարքով:

Հիշեցնենք, որ նախորդ տարի մեծ աղմուկ բարձրացավ, որ Ռուստամ Բաքոյանը պարբերաբար ծեծել է իր քաղաքացիական կնոջը եւ նրանից գումար պահանջել: Սրա մասին հայտարարել էր բռնության ենթարկված կինը: Իսկ ՔՊ քարտուղար Արթուր Հովհաննիսյանն էլ ապրիլի 4-ին՝ ՄԻՊ թեկնածուի ընտրության ժամանակ, բռնության կոչեր էր հնչեցրել՝ սպառնալով կտրել ընդդիմադիր թեկնածուի ականջը: Ոստիկանությունը նաեւ նրա մոտ թմրանյութ էր հայտնաբերել:

Դեսպանը գերմանացուն բնորոշ պատասխանատվությամբ լսեց բոլոր հարցադրումները, ապա ժպիտով մերժեց պատասխանել՝ ասելով, որ մտադիր չէ հարցազրույց տալ:

Վերջում հավելենք, որ երբ հարցերը հնչեցնում էինք հայերեն, սկզբում թարգմանչուհին թարգմանեց, իսկ վերջում Ռուստամ Բաքոյանը, նրա ձեռքին հարվածելով, հասկացնում էր՝ չթարգմանել: Այնուամենայնիվ, մենք իրացրինք մեր խոսքի ազատությունը. հարցերը հնչեցրեցինք նաեւ անգլերենով, թեեւ դեսպանն էլի չխոսեց:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱՐԿ ՍՏԱՑԵ՞Լ Է, ԹԵ՞ ՈՉ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություններ էր ստացել այն մասին, որ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը աշխատանքի առաջարկ է ներկայացրել Արցախի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության նախկին նախարար Հայկ Խանումյանին: «Ժողովուրդ»-ը կապ հաստատեց Հայկ Խանումյանի հետ, հասկանալու համար, թե խոսքը ինչ աշխատանքի մասին է, կամ առհասարակ աշխատանքի առաջարկ այս կառույցից ստացել է, թե ոչ: Ի պատասխան մեր հարցի՝ պարոն Խանումյանը նշեց. «Նման նախաձեռնություն, առավել եւս՝ առաջարկ, չի եղել»: ArmLur.am-ը կապ հաստատեց նաեւ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության մամուլի խոսնակ Սոնա Հարությունյանի հետ, հասկանալու համար՝ կա արդյոք նման նախաձեռնություն: «Տվյալ տեղեկատվությունը իրականությանը չի համապատասխանում»,-պատասխանեց Հայաստանի Հանրապետության ՏԿԵՆ-ն մամուլի խոսնակը:

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ, ՔՆՆԱՐԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Հայաստանում Լեհաստանի արտակարգ եւ լիազոր նորանշանակ դեսպան Պյոտր Սքվեչինսկիին:

Վարչապետը շնորհավորել է դեսպանին պաշտոնը ստանձնելու առթիվ եւ մաղթել հաջողություններ հետագա գործունեության մեջ: Նիկոլ Փաշինյանը կարեւորել է հայ-լեհական հարաբերությունների շարունակական զարգացումն ինչպես քաղաքական երկխոսության, այնպես էլ տնտեսության ոլորտում: Վարչապետն ընդգծել է առեւտրատնտեսական կապերի ընդլայնման ուղղությամբ առկա ներուժի իրացման կարեւորությունը:

Անդրադարձ է կատարվել Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից էթնիկ զտման քաղաքականության հետեւանքով 100 հազարից ավելի ԼՂ մեր հայրենակիցների բռնի տեղահանությանն ու ստեղծված հումանիտար իրավիճակին:

Պյոտր Սքվեչինսկին շեշտել է Լեհաստանի կառավարության շահագրգռվածությունը՝ խորացնելու եւ ընդլայնելու համագործակցությունը Հայաստանի հետ տարբեր ուղղություններով եւ հավելել, որ գործունեության ընթացքում կներդնի ողջ ջանքերը՝ ի նպաստ երկկողմ կապերի հետագա զարգացման:

Հանդիպմանը մտքեր են փոխանակվել հայ-լեհական հարաբերությունների, Հայաստան-ԵՄ փոխգործակցության եւ այլ հարցերի շուրջ:

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ

Իսրայելցի զինվորականները Գազայի հատվածի խորքերում կատաղի մարտեր են մղում պաղեստինյան «Համաս» արմատական շարժման զինյալների հետ: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին հաղորդում է Իսրայելի պաշտպանության բանակի մամուլի ծառայությունը:

«Վերջին ժամերին Իսրայելի պաշտպանության բանակի միացյալ ուժերը ցամաքային ստորաբաժանումների գլխավորությամբ կատաղի մարտեր են մղել Գազայի հատվածի տարածքի խորքերում», - հաղորդագրությունից հատված է մեջբերում ՏԱՍՍ-ը:

Իսրայելի Պաշտպանության բանակը նաեւ հայտնել է, որ իսրայելցի զինվորականները հարձակվել են «Համաս»-ի առաջադիրքի վրա՝ անկլավի հյուսիսային մասում:

«Բացի այդ, (խմբ.՝ իսրայելական) ուժերը սպանել են տասնյակ ահաբեկիչների, խոցել են հակատանկային հրթիռային կայանքներ, դիտակետեր եւ առգրավել բազմաթիվ զենքեր», - նշվում է տեքստում:

Իսրայելն ընդլայնել է իր ցամաքային գործողությունները Գազայի հատվածում: Երկրի վարչապետ Բենյամին Նեթանյահուն հայտարարել է Գազայում ռազմական գործողության 3-րդ փուլի մեկնարկի մասին:

Հիշեցնենք, որ Գազայում պաղեստինյան առողջապահության նախարարությունը հայտնել է, որ հոկտեմբերի 7-ից Իսրայելի ավիահարվածների հետեւանքով 8525 պաղեստինցի է զոհվել, այդ թվում՝ 3542 երեխա: Հոկտեմբերի 7-ին Իսրայելի վրա պաղեստինյան «Համաս» արմատական շարժման անակնկալ հարձակման հետեւանքով իսրայելական կողմում զոհերի թիվը 1400 է: Իսրայելի բանակը հայտնել է նաեւ, որ վերջին հակամարտության ընթացքում զոհված զինվորականների թիվը 315 է: «Համաս»-ի կողմից գերի է պահվում Իսրայելից առեւանգված 240 մարդ:

Հավելենք նաեւ, որ Իսրայելի պաշտպանության բանակի մամուլի քարտուղար Ջոնաթան Կոնրիկուսը հայտարարել է, որ առնվազն 800 հազար խաղաղ բնակիչ լքել է Գազայի հատվածի հյուսիսային շրջանները: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՏԱՍՍ գործակալությունից:

ԻՊԲ-ի ներկայացուցիչը նաեւ նշել է, որ հարավում «Ռաֆահ» հսկիչ անցակետով Եգիպտոսից շարունակում է մարդասիրական օգնություն մտնել Գազայի հատված:

Հոկտեմբերի 13-ին Իսրայելը ՄԱԿ-ին տեղեկացրել էր, որ 1,1 միլիոն պաղեստինցիներ պետք է մեկ օրվա ընթացքում տարհանվեն Գազայի հատվածի հարավ: Իսրայելի պաշտպանության բանակն իր կոչը բացատրել էր այն բանով, որ պաղեստինյան «Համաս» շարժման զինյալները թաքնվում են Գազա քաղաքի տների տակ գտնվող թունելներում եւ բազմաբնակարան շենքերում:

«Համաս»-ը բնակիչներին կոչ է արել անտեսել Իսրայելի հանձնարարականը: Շարժումը նաեւ ՄԱԿ-ին դիմել է խնդրանքով՝ միջոցներ ձեռնարկել բռնի տեղահանման դեմ:

ԽՈՍԵՑ

ԱՆԿԼԱՎՆԵՐԻ ՀԱՐՑՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

«Երբ կնքվի «խաղաղության պայմանագիրը», կդարձնենք անկլավների, այդ թվում՝ Արծվաշենի հարցը»: Այս մասին հոկտեմբերի 31-ին, Ամ-ում լրագրողների հետ զրույցում նշեց տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը:

«Երբ որ «խաղաղության պայմանագիրը» կնքվի, որի դրույթներից, ենթադրում եմ, մեկը կամ դրան հաջորդող գործընթացներից մեկը կլինի դեմարկացիա-դելիմիտացիա երեւույթը: Այս հարցերը կդիտարկվեն համատեքստում, կքննարկվեն, թե ինչ իրավական հիմքեր կան, որովհետեւ անկլավի կամ որեւէ տարածքի համար նույնպես պետք է իրավական հիմքեր լինեն՝ մենք ինչ ունենք իրենց մոտ, իրենք ինչ ունեն մեզ մոտ: Համապատասխան հանձնաժողովները որոշակի աշխատանք անելուց հետո կքննարկեն եւ որոշակի եզրակացության կգան: Առաջին հերթին՝ հենց Արծվաշենը պետք է քննարկենք»,- ասել է Սանոսյանը:

Անդրադառնալով երկրի ներսում տեղի ունեցող շինարարական պրոցեսներին՝ Սանոսյանը նշեց, որ «Հյուսիս-Հարավ» ծրագրում դրականն այն է, որ վերջապես որոշ հատվածներում մտանք շինարարության փուլ:

«Մասնավորապես՝ երկար տարիներ կառուցված էր Արտաշատից Երեւան եւ Երեւանից Աշտարակ հատվածները: Ընդ որում, Երեւանի որոշ հատվածներում կան որոշակի դատական հարցեր, ինչի համար էլ աշխատանքները կամ դանդաղ են առաջ գնում, կամ առաջ չեն գնում, բայց կարծես դրանք էլ են լուծում ստանում: Հիմա մենք շինարարության փուլում ենք՝ Աշտարակից Թալին հատվածի: Գիտեք, որ գործող փոխարինող ճանապարհը շատ ոլորաններ ունի, հաճախ վթարներ են լինում, անհարմար է երթեւեկել: Հիմա երկու շինարարական ընկերություն աշխատում է. յուրաքանչյուրը 18 ամիս ժամկետ ունի աշխատելու: Լանջիկից Գյումրի հատվածի հիմնական մասը այս տարի կավարտվի, կմնան ճանապարհի կահավորման կամ որոշ այլ փոքր աշխատանքներ: Եթե եղանակները թույլ տան, ասֆալտապատումն ամբողջությամբ կավարտվի:

Մենք վերջապես սկսել ենք Հարավի առաջին հատվածի՝ Ագարակից Քաջարան հատվածի աշխատանքները: Արդեն մրցույթն իրականացրել ենք. հաղթող ընկերություն ունենք՝ իրանական: Այնտեղ եւս 2024-ին շինաշխատանքներ կսկսվեն»,- հայտարարեց Սանոսյանը:

Խոսելով Մարգարայի կամրջի վերագործարկման մասին՝ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարը նշեց, որ ցանկացած ենթակառուցվածք բացել կամ օգտագործելը այդ ենթակառուցվածքն օգտագործող բոլոր երկրներին բերում է դրական, օգտակար հետեւություն կամ արդյունք:

«Ինչ վերաբերում է Մարգարային, ապա հիմա այնտեղ որոշակի շինարարական, կահավորման աշխատանքներ են տեղի ունենում, որոնք իրականացնում են ՊԵԿ-ի քաղաքաշինության մեր գործընկերները: Ընթացքի մեջ են. կիրականացնեն, իսկ թե կոնկրետ երբ կսկսի աշխատել, չեմ կարող ասել, այդ մասով այլ բանակցողներ աշխատում են»,- ասաց Սանոսյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՄԵԿՆԻ ԹՈՒՐՔԻԱ

Իրանի արտգործնախարար Հոսեյն Ամիր Աբդուլլահիանը չորեքշաբթի կայցելի Թուրքիա՝ քննարկելու տարածաշրջանային հարցեր, այդ թվում՝ Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակը: Ինչպես տեղեկացվում է «ՌԻԱ Նովոստիի» կողմից, այդ մասին հաղորդագրություն է զետեղվել Թուրքիայի արտգործնախարարության սոցցանցային X հարթակում:

«Սպասվում է, որ Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանը իրանցի գործընկերոջ հետ կքննարկի օրակարգային տարածաշրջանային հարցեր, մասնավորապես՝ Պաղեստինի իրադարձությունները, ինչպես նաեւ՝ մեր երկկողմ հարաբերությունները», - ասված է Թուրքիայի ԱԳՆ-ի հաղորդագրության մեջ:

ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական քաղաքացիական պաշտպանության եւ մարդասիրական օգնության գործառնությունների գլխավոր հանձնաժողովը գրեթե 1,7 մլն եվրոյով ավելացնում է իր մարդասիրական ֆինանսավորումը Հայաստանին՝ աջակցելով Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին եւ Հայաստանի կարողությունների մեծացմանը:

Նոր ֆինանսավորումը նպատակաուղղված կլինի ամրապնդելու ԵՄ գործող մարդասիրական օգնությունը տեղահանվածներին՝ տրամադրելով դրամական օգնություն, ապաստան, պարենային ապահովություն եւ ապրուստի, բժշկական միջոցներ: Այս ֆինանսավորումը գալիս է լրացնելու ԵՄ կողմից արդեն իսկ խոստացված 10,45 միլիոն եվրոն, ինչը 2023թ. մարդասիրական ընդհանուր ֆինանսավորումը կհասցնի ավելի քան 12 միլիոն եվրոյի:

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ՀԱՐՎԱԾՆԵՐ

Հոկտեմբերի 31-ին սիրիական կողմի նախաձեռնությամբ հեռախոսազրույց է տեղի ունեցել Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի եւ Սիրիայի՝ արտերկրում գտնվող հայրենակիցների եւ արտաքին գործերի նախարար Միքդադի միջեւ:

Ինչպես հաղորդում է ՌԴ ԱԳՆ մամուլի ծառայությունը, զրույցի ընթացքում արտաքին կապերի գերատեսչությունների ղեկավարները հատուկ ուշադրություն են դարձրել պաղեստինա-իսրայելական հակամարտության գոտում իրավիճակի կտրուկ զարգացմանը:

Լավրովը մատնանշել է Սիրիա եւ տարածաշրջանի այլ երկրներ զինված էսկալացիայի տարածման անթույլատրելիությունը: Այդ կապակցությամբ նա նշել է սիրիական տարածքում Իսրայելի օդային հարվածների անընդունելիությունը, որոնք, Գազայի հատվածի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների ֆոնին, ավելի հաճախակի են դարձել:

Ընդգծվել է Գազայում արյունահեղության անհապաղ դադարեցման, մարտերի հետեւանքով առաջացած բոլոր հումանիտար խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Երեւանի քաղաքապետարանից տեղեկացնում են, որ մայրաքաղաքում տրանսպորտային հոսքերի անցանելիությունն ավելացնելու նպատակով՝ նոյեմբերի 1-ից երթեւեկության կազմակերպման փոփոխություն կկատարվի Սաֆյան անցուղում: Թոթովենց փողոցից դեպի Նելսոն Ստեփանյան փողոց երթեւեկությունը կկազմակերպվի միակողմանի:

Միաժամանակ նշված ճանապարհահատվածում կտեղադրվեն համապատասխան ճանապարհային նշաններ, եւ կիրականացվեն գծանշման աշխատանքներ:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ՏՈՒԺՈՂԻ ԾԱՆՈԹԸ ՉԵՐԲԱԿԱԼՎԵՑ

2023թ. հոկտեմբերի 27-ին՝ ժամը 01:20-ին, քաղաքացին զանգահարել է ոստիկանություն եւ հայտնել, որ իրեն դանակահարել են: Նույն օրը՝ ժամը 02:50-ին, ահազանգ է ստացվել նաեւ «Էրեբունի» բժշկական կենտրոնից այն մասին, որ «կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած թափանցող վերք, երկկողմանի պնեւմոթորաքս» ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել Երեւան քաղաքի կին բնակիչ:

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում, առողջությանը ծանր վնաս պատճառելու հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում իրականացված անհրաժեշտ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ոստիկանություն զանգահարած եւ հիվանդանոց տեղափոխված անձը Երեւան քաղաքի 36-ամյա բնակչուհի է, ով ճանաչվել է տուժող, եւ հարցաքննվել՝ դեպքի հանգամանքների շուրջ:

Նախաքննության ընթացքում ձեռնարկված քննչական եւ ապացուցողական գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի՝ էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ դեպքի վայրը, շարժառիթը, ինչպես նաեւ՝ առերեւույթ հանցագործություն կատարած անձի ինքնությունը. վերջինս հանդիսանում է տուժողի ծանոթը, ով Երեւան քաղաքի բնակիչ է՝ 39 տարեկան:

Քննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ վերջինս տուժողին վերոհիշյալ վնասվածքները հասցրել է՝ իր անձնական բնույթի առաջարկին՝ վերջինիս չհամաձայնելու պատճառով:

Վարույթի շրջանակներում կատարվել են քննչական անհրաժեշտ գործողություններ: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել եւ վերցվել են քննության համար էական նշանակություն ունեցող մի շարք առարկաներ, իրեր, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործության միջոց հանդիսացած դանակը՝ արնանման հետքերով: Հարցաքննվել են մի շարք անձինք, նշանակվել են փորձաքննություններ:

Ոստիկանության ծառայողների հետ համատեղ իրականացված անհետաձգելի միջոցառումների արդյունքում 39-ամյա տղամարդը հայտնաբերվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին: Վերջինս, անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալվել է: Որոշում է կայացվել կասկածյալի հագին եղած հագուստներն առգրավելու մասին:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ 39-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասով: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ վերջինիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է:

ՔՆՆՉԱԿԱՆ

ԽՈՇՏԱՆԳՎԵԼ ԵՆ, ՄԱՀԱՑԵԼ

Լեռնային Ղարաբաղի դեմ սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ռազմական գործողությունների հետեւանքով Լեռնային Ղարաբաղից Հայաստան գաղթելիս 14 անձ խոշտանգումների է ենթարկվել, 64-ը՝ մահացել:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին Քննչական կոմիտեի YouTube-ի պաշտոնական ալիքում հրապարակված տեսանյութում հայտնել է ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության՝ հատկապես կարեւոր գործերի քննության վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը:

«Ունենք 200-ից ավելի զոհված զինծառայող եւ քաղաքացիական անձ: Շուրջ 12 քաղաքացիական անձի եւ շուրջ 30 զինծառայողի գտնվելու վայրը մինչեւ հիմա հայտնի չէ»,-նշել է Վարդանյանը:

Նրա խոսքով՝ 14 խոշտանգված անձանցից 12-ը զինծառայող է, երկուսը՝ քաղաքացիական անձ:

Ռազմական գործողությունների հետեւանքով սպանվել է քաղաքացիական ինը անձ, նրանցից երեքը՝ երեխա: Տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել 231 զինծառայող եւ 80 քաղաքացիական անձ:

Անդրադառնալով առեւանգումներին եւ գերեվարումներին՝ Վարդանյանն ասել է՝ հոկտեմբերի 30-ի դրությամբ կա ֆիքսված 16 անձ: Նրանցից տասը քաղաքացիական անձիք են: Գերեվարված 16 անձանցից ութը Բաքվի բանտերում՝ շինծու մեղադրանքներով կալանավորված Լեռնային Ղարաբաղի նախկին եւ ներկա քաղաքական ղեկավարության անդամներն են: 44-օրյա պատերազմից հետո մինչեւ սեպտեմբերի 19-ը հաստատված եւ Ադրբեջանում ապօրինի պահվող եւս 37 անձ կա:

Պաշտոնատար անձանց, զինծառայողների ու քաղաքացիական անձանց վերաբերյալ Հայաստանը Մարդու իրավունքների եվրոպական դատարան Ադրբեջանի դեմ հրատապ միջոցներ կիրառելու պահանջ է ներկայացվել:

«Այս պահի դրությամբ ինը անձի մասով մենք ունենք Ադրբեջանի կողմից հաստատում, որ տվյալ անձիք գերության մեջ են: Մյուսների հետ կապված գործընթացը դեռ ընթացքի մեջ է»,-նշել է Վարդանյանը:

Նրա խոսքով՝ վարույթն իրականացնող մարմինը համագործակցում է նաեւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան գրասենյակի հետ: Այժմ վարույթի շրջանակում իրականացվում են մեծածավալ քննչական եւ վարույթային գործողություններ, հարցաքննություններ, մարմինների զննություններ: Նշանակվել են մի շարք, այդ թվում՝ դատագենետիկական, դատաբժշկական փորձաքննություններ, որոնց եզրակացությունները դեռ չեն ստացվել:

«Զոհված անձանց հարազատները ճանաչվել են որպես տուժող: Նույնականացման գործընթացը դեռ չի ավարտվել: Վարույթն իրականացնող մարմնի կողմից նաեւ ֆիքսված են բոլոր այն անձինք, ովքեր բռնի տեղահանման են ենթարկվել»,-շեշտել է Ռաֆայել Վարդանյանը:

Բռնի տեղահանված ավելի քան հարյուր հազար հայ ճանաչվելու է տուժող: Վարդանյանը հորդորում է այն անձանց, ովքեր Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ տեղեկություններ ունեն՝ դիմեն Քննչական կոմիտե: Անձի գաղտնիությունը երաշխավորվում է:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԴԻՄԵՑ ԴԱՏԱՐԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Երեւանի քաղաքապետարանի «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը դատի է տվել ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի Երեւանի տարածքային բաժնին: Նա պահանջում է, որ դատարանը ստիպի 31.07.2023թ. որոշումն առ ոչինչ ճանաչելու:

ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի պետը Հովհաննես Մարտիրոսյանն է:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Լոռու մարզի Ստեփանավան համայնքի նախկին ղեկավար Ս.Ղ.-ն, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, պաշտոնական կեղծիք կատարելու հետեւանքով, օտարել է քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող՝ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ներառված զբոսայգու տարածքներ:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում են Գլխավոր դատախազությունից, մանրամասնելով, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի ծագման աղբյուրը թաքցնելու եւ խեղաթյուրելու, անշարժ գույքն օրինական գործունեության ներքո լեգիտիմացնելու նպատակով, Ս.Ղ.-ն զբոսայգու տարածքները փոխանցել է իր հետ փոխկապակցված անձանց:

Դատախազը 2023 թվականի հոկտեմբերի 31-ին նոր հանրային քրեական հետապնդում է հարուցել Ս.Ղ.-ի նկատմամբ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ) (1 դրվագ), 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին) (11 դրվագ), 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (փողերի լվացումը)) (երկու դրվագ), 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցավոր ճանապարհով ստացված խոշոր չափերով եկամուտներն օրինականացնելը (փողերի լվացումը)) (մեկ դրվագ) եւ 314-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական կեղծիք կատարելը) (վեց դրվագ):

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 30-ից 31-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 73 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

8 ԱՄԻՍ ԵՆ ՆԱԽԱՏԵՍԵԼ

Տեւական ժամանակ է, ինչ Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի՝ Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի հարավային ծայրին գտնվող կամուրջը հիմնանորոգվում է, այդ պատճառով այն փակ է տրանսպորտային միջոցների երթեւեկության համար: Միջպետական ավտոճանապարհի այդ հատվածը տրանսպորտային միջոցները հարկադրված են անցնել շրջանցիկ ավտոճանապարհով, որը ձգվում է Թեղուտ գյուղի մեջով: Մի քանի կիլոմետր երկարությամբ գյուղամիջյան ճանապարհը շատ փոսառատ է, հանդիպակած ավտոմեքենայի հայտնվելու դեպքում վարորդը ստիպված է մեքենան գցել խոր փոսերի մեջ: Թեղուտի ավտոմոբիլային կամուրջը հիմնանորոգելուց առաջ հարկ էր Թեղուտ գյուղով ձգվող ճանապարհի մեծ փոսերը լցնել ասֆալտով: Կամրջի վերանորգումն սկսվելոց հետո՝որոշ ժամանակ անց, Թեղուտով ձգվող գյուղամիջյան ճանապարհի կեսի մեծ փոսերը լցրել են ասֆալտով, սակայն այդ ճանապարհի մնացած հատվածի մեծ փոսերը ասֆալտով կամ խճաքարով չեն հարթեցրել: Կարծես քիչ է, որ գյուղամիջյան այդ ճանապարհը փոսառատ, կիսաքանդ է, թեղուտցիները գյուղամիջյան ավտոճանապարհին արհեստական խոչընդոտ են ստեղծել՝ «պառկած միլիցա» են սարքել, ինչի հետեւանքով ճանապարհով երթեւեկելը դժվար է: «Ժողովուրդ» օրաթերթը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում է ուղարկել, պարզելու, թե ե՞րբ է սկսվել Թեղուտի կամրջի վերանորոգումը, ե՞րբ կավարտվի, ճանապարհաշինական ո՞ր կազմակերպությունն է այն իրականացնում: Մարզպետարանից ստացած պատասխանում նշված է. «Մ- 4, Երեւան-Սեւան-Իջեւան-Ադրբեջանի սահման կմ 104 + 300 հատվածում գտնվող կամրջի վերանորոգման աշխատանքները ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնում է «Կամուրջշին» ՍՊԸ-ն՝ ՀՀ ՏԿԵՆ Ճանապարհային դեպարտամենտի պատվերով: Աշխատանքները մեկնարկվել են 2023թ. հունիսի 21-ին, աշխատանքների կատարման պայմանագրային վերջնաժամկետ է սահմանվել 2024թ. փետրվարի 15-ը, սակայն շինարարական կազմակերպության կողմից նախատեսվում է ավարտել մինչեւ տարեվերջ»:

ԹՌՉՈՂ ՕԲՅԵԿՏ՝ ԻՋԵՎԱՆՈՒՄ

Իջեւան քաղաքի թիվ 5 հիմնական դպրոցի ուսուցչուհի Արմինե Հովակիմյանը հոկտեմբերի 30-ին ֆեյսբուքյան իր էջում տեղադրել է մեկ րոպե եւ 4 վայրկյան տեւողությամբ տեսանյութ, ուր գիշերային երկնքում, մթան մեջ, մերթ կարմիր, մերթ կանաչ, մերթ պայծառ լուսավորվում է թռչող անհայտ օբյեկտ: Ուսուցչուհին դիտողներին խնդրում է պարզաբանել, թե ինչ է դա: Նոյեմբերյան քաղաքի բնակչուհի Մարիամ Անտոնյանը, տեսանյութին արձագանքելով, գրել է, որ 44-օրյա պատերազմից առաջ Նոյեմբերյան քաղաքի երկնքում շատ էին նման թռչող օբյեկտները: Իջեւանցի մի օգտատեր էլ գրառել է, թե դա ապօրինի ծառահատումներին ու որսագողությանը հետեւելու համար օդ բաց թողնված դրոն է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏՐԱՄԱԴՐՎԵՑ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՐԿՈՒՏԻՑ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հոկտեմբերի 30-ից օգոստոսի 2-ը տեղացած ուժեղ կարկուտի հետևանքով Լոռու մարզի Ալավերդի համայնքի առավել տուժած 1088 անձ 372 ընտանիք, Հայկական կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կողմից ստացել է կանխիկ աջակցություն՝ աղետի հետևանքները փոքր ինչ մեղմելու նպատակով: Յուրաքանչյուր անձի «Հայփոստի» միջոցով տրամադրվել է 39 000 ՀՀ դրամ, ընդհանուր առմամբ փոխանցվել է 42 432 000 ՀՀ դրամ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությանը մարդասիրական աջակցության համար ֆինանսական միջոցները տրամադրել է Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի՝ Աղետներին արձագանքման արտակարգ իրավիճակների ֆոնդը:

ՀԿԽԸ-ն առավել տուժած ընտանիքների կարիքների անհատական գնահատում եւ ցուցակների վերջնական ճշգրտում իրականացրել է Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի հետ սերտ համագործակցությամբ՝ հայտնաբերելու թիրախային տնային տնտեսությունները, որտեղ.

• ակնառու վնասվել են բնակչի բնակելի տան կառուցվածքային մասերը, տնամերձ հողամասը, առկա է գյուղատնտեսական կենդանիների կորուստ,
• միակ եկամտի աղբյուրը վնասված գյուղատնտեսական միջոցներն էին, եւ բերքի 75-ից 100%-ը կորցրել են:

Կանխիկ աջակցությունը տրամադրվել է Ալավերդի համայնքի Ալավերդի, Օձուն, Ծաղկաշատ, Հաղպատ, Ակներ, Սանահին, Աքորի, Ամոջ եւ Հագվի բնակավայրերի առավել խոցելի ընտանիքներին, որոնք ընտրվել են հետեւյալ չափորոշիչներով.

• վեց եւ ավելի անդամ, այդ թվում՝ մինչեւ 18 տարեկան երեք կամ ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ,
• մինչեւ 18 տարեկան երկու կամ ավելի երեխաներ ունեցող միակողմանի ծնողազուրկ ընտանիքներ,
• միայն 65 եւ բարձր տարիքի տարեցներից բաղկացած ընտանիքներ,
• միայն հաշմանդամություն ունեցող անձանցից բաղկացած ընտանիքներ,
• միայն 65 եւ բարձր տարիքի տարեցներից եւ հաշմանդամություն ունեցող անձանցից բաղկացած ընտանիքներ:

Հարցերի դեպքում շահառուները կարող են զանգահարել ՀԿԽԸ՝ 060625066 հեռախոսահամարով:

Հայկական կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ), լինելով Կարմիր խաչի եւ Կարմիր մահիկի միջազգային շարժման լիիրավ անդամ, առաջնորդվում է Շարժման հիմնարար սկզբունքներով՝ Մարդասիրություն, Անկողմնակալություն, Չեզոքություն, Անկախություն, Կամավորություն, Եզակիություն, Համընդհանրություն:

Հանդիսանալով կառավարությանն աջակցող կառույց՝ մարդասիրական ոլորտում ՀԿԽԸ-ն արդեն 103 տարի է գործունեություն է ծավալում հանրապետության ամբողջ տարածքում՝ հետեւյալ ռազմավարական ուղղություններով՝ աղետների կառավարում, բնակչության տեղաշարժ, սոցիալ առողջապահություն, առաջին օգնություն, երիտասարդների հիմնախնդիրներին արձագանք, մարդասիրական արժեքների տարածում եւ այլն:

ՀԿԽԸ առաքելությունն է նվազեցնել բնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

ԱՆՑՅՈՒԴԱՐՁ

ՔԵՐՈԲՅԱՆ ՈՒ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հիմա տարբեր ուղղություններով առեւտրային գործարքները նորմալ իրականանում են, եւ կոնյակի հետ կապված մի քանի օրվա խնդիրը, որ առաջացավ, արդեն չկա, եւ որոշ ընկերություններ լասանավային ուղղությունով էին արտահանում, ու ոչ մի խնդիր չի եղել: Դա կարող է համարվել ինչ-որ մասնավոր դեպք, որը լուծվել է»: Այս մասին հոկտեմբերի 31-ին Ամ-ում լրագրողների հետ զրույցում նշեց էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը՝ անդրադառնալով Հայաստանից Ռուսաստան արտահանմանը:

«Մեզ համար շատ կարեւոր են Ռուսաստանի հետ առեւտրային հարաբերությունները, եւ մենք այն զարգացնում ենք, բայց նաեւ էական ջանքեր, ռեսուրսներ ենք ծախսում եւ ժամանակ, որպեսզի դիվերսիֆիկացնենք մեր արտաքին տնտեսական հարաբերությունները նաեւ այլ ուղղություններով: Այդ ուղղություններով ունենք որոշակի հաջողություններ. օրինակ՝ ԱՄԷ-ի հետ վերջին երկու-երեք տարվա մեջ փոխադարձ առեւտուրը տասնապատկվել է, եւ արդեն մեկ միլիարդից ավելի է, եւ այս տարի մեկուկես կամ գուցե երկու միլիարդ դոլարի կհասնի»,- ասաց նախարարը:

Շարունակելով արտաքին առեւտրի թեման՝ Քերոբյանը նշեց, որ ապրանքների եւ ծառայությունների առեւտրի մասով մենք առաջին անգամ կգերազանցենք մեր ՀՆԱ-ն. այսինքն՝ մեր ՀՆԱ-ից ավելի արտաքին առեւտրաշրջանառություն կունենանք, եւ դա կլինի առաջին անգամ Հայաստանի պատմության մեջ:

Ռուսաստանի հետ տնտեսական հարաբերությունների հետ կապված՝ Քերոբյանն ասաց, որ տարբեր մտավախություններ եղել են, բայց ընդամենը մտավախությունների մակարդակով. «Ընդհանուր առմամբ մենք տեսնում ենք, որ մեր ընկերություններն իրենց գործընկերների հետ ինտենսիվ են աշխատում Ռուսաստանում»,- ասաց Վահան Քերոբյանը:

Նա նաեւ խոսեց տնտեսական հարաբերությունների դիվերսիֆիկացիայի մասին եւ նշեց. «Նոյեմբերի 5-10-ը Շանհայում Չինաստանի ամենախոշոր միջազգային ցուցահանդեսին մասնակցելու ենք մեր տաղավարով: Այնտեղ ներկայացված են լինելու 20-ից ավելի ընկերություններ: Փետրվարին ԱՄԷ-ում մասնակցելու ենք խոշորագույն միջազգային ցուցահանդեսի, եւ ընդհանուր առմամբ մեր մասնակցությունը տարածաշրջանային ցուցահանդեսներին էապես դիվերսիֆիկացրել ենք: Մեզ համար շատ կարեւոր է, որ արդեն առկա գործարար կապերն ամրապնդվեն եւ զարգանան, բայց մենք տեսնում ենք նաեւ շատ մեծ պոտենցիալ այլ ուղղություններով՝ նաեւ եվրոպական: Մենք հիմա Գերմանիայի, ԱՄՆ-ի հետ գուցե շատ մոտ ենք, երկկողմ առեւտրաշրջանառությունը 1 մլրդ դոլարն անցկացնելուն: Էապես աճում է Ֆրանսիայի հետ առեւտրաշրջանառությունը:

Մենք բոլոր հնարավոր ուղղություններով աշխատում ենք մաքսիմալացնել, ինչը շատ լավ է»:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 10-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԳՆԱՀԱՏՎԵՑ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՊՈՏԵՆՑԻԱԼԸ

Հայաստանի տնտեսական աճի պոտենցիալն այս պահի դրությամբ գնահատվում է 5.5 տոկոս: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ասաց Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում՝ 2024 թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական քննարկումներում: «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը նշեց, որ տնտեսական աճին նպաստող գործոնների մեծամասնությունը արտաքին են: «Եթե փորձենք զտել ներքին ու արտաքին գործոնները, որոնք ազդում են տնտեսական աճի վրա, եթե միջինացնենք տնտեսական արտաքին պայմանները, վերջին 5 տարվա կտրվածքով մեր տնտեսական աճը որքա՞ն կլիներ»,-հարցրեց պատգամավորը: Ֆինանսների նախարարն ասաց. «Սովորաբար գնահատվում է, որ ՀՀ-ի տնտեսական պոտենցիալը կազմում է 5.5 տոկոս: Այսինքն՝ այս պահի դրությամբ Հայաստանի տնտեսական աճի պոտենցիալը գնահատվում է 5.5 տոկոս: Այս պոտենցիալից են կախված այն կապիտալ ներդրումները, որոնք մենք իրականացնում ենք: Այդ պոտենցիալի մեծությունը կախված է ներդրումներից, մեր տնտեսության դիվերսիֆիկացիայից եւ այն բարեփոխումներից, որոնք մենք իրականացնում ենք»: Հովհաննիսյանը հավելեց՝ կառավարության հիմնական ջանքը պետք է ուղղված լինի այդ պոտենցիալի բարձրացմանը: Հայաստանի կառավարությունն այս տարի սպասում է առնվազն 7 տոկոս տնտեսական աճ: 2024-ի համար եւս տնտեսական աճի թիրախ է սահմանվել 7 տոկոսը:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (3)

Շրջակա միջավայրի նախարարության՝ Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N 217-Ն եւ 03.08.2023թ. N 1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Մարտունու ԳԳՄ-ի՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի վարչական տարածքում խմելու կենցաղային նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 0,11 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-ից - 18-ը դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ կառավարական 3-րդ տուն՝ 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2023 թվականի նոյեմբերի 6-ին՝

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ժամը 16:00-ին, կառավարական 3-րդ տուն՝ 5-րդ հարկ՝ 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՏԿԱՑՎԵՑ

ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԸ ԿՎԵՐԱՆՈՐՈԳՎԻ

2024 թվականի բյուջեով նախատեսված է 1,5 միլիարդ դրամ Երեւանի մետրոպոլիտենի վերանորոգման համար, եւ 4 միլիարդ դրամ նոր կայարանի կառուցման համար: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2024 թվականի պետական բյուջեի նախագծի նախնական քննարկումների ժամանակ այս մասին հայտարարեց Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը՝ պատասխանելով ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Բաբկեն Թունյանի հարցին, որը վերաբերում էր Երեւանի մետրոպոլիտենի հետ կապված հրատապ խնդիրներին:

Թունյանի խոսքով՝ գործակարգավարական նիստի ժամանակ Երեւանի քաղաքապետը նշել է, որ Երեւանի մետրոպոլիտենի հետ կապված հրատապ խնդիր կա, եւ չի լուծվել ֆինանսական հարցը:

«Խոսքը մոտ 650 միլիոն դրամ գումարի մասին է եւ ասվել է, որ այդ ֆինանսավորումը լինելու է հաջորդ տարվա բյուջեով: Դատելով քաղաքապետի ելույթից՝ այդ հարցը ամենահրատապն է Երեւանի համար: Քանի որ հարցը վերաբերում է ե՛ւ Երեւան քաղաքին, ե՛ւ բյուջեին, համ տրանսպորտին, կխնդրեի ձեր մեկնաբանությունը: Եթե հարցն այդքան հրատապ է՝ միջոցներ չունե՞նք պահուստային ֆոնդից»,-հարցրեց Թունյանը Ֆինանսների նախարարին:

Պատասխանելով հարցին՝ նախարար Հովհաննիսյանն ասաց, որ Երեւանի մետրոպոլիտենի համար արդեն այս տարի գումարներ հատկացրել են եւ նամակ են ստացել քաղաքապետարանից, որում նշված էր, որ տարբեր ծրագրերի համար նախատեսված գումարներից վերաբաշխում է արվել Երեւանի մետրոպոլիտենի այլ կապիտալ ծախսեր անելու համար: Նրա խոսքով՝ քաղաքապետարանին հարցադրումներ են ուղարկել, թե ինչու են վերաբաշխումներ արել եւ պատասխանը ստանալուց հետո միայն կարող են կարծիք հայտնել:

«Ինչ վերաբերում է Երեւանի մետրոպոլիտենին, ապա քննարկել ենք Երեւանի մետրոպոլիտենում երկար տարիներ ներդրում չանելու փաստը եւ հասկացել ենք, որ, այո, մենք գտնվում ենք մի իրավիճակում, որտեղ Երեւանի մետրոպոլիտենին հրատապ ներդրումներ են անհրաժեշտ: Եվ այդ պատճառով բավականին լուրջ գումարներ ենք հատկացրել. 2024 թվականի բյուջեով նախատեսված է 1,5 միլիարդ դրամ Երեւանի մետրոպոլիտենի վերանորոգման համար, եւ 4 միլիարդ դրամ էլ նոր կայարանի կառուցման համար: Այդ գիտակցումն ունենք, որ Երեւանի մետրոպոլիտենում ներդրումներ պետք է արվեն, որոշ դեպքերում հրատապ հարցեր են առաջացել, եւ 2023 թվականին պահուստային ֆոնդից դրա համար գումարներ հատկացրել ենք»,-ասաց Ֆինանսների նախարարը:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

Շրջակա միջավայրի նախարարության՝ Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N 217-Ն եւ 03.08.2023թ. N 1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է «Արագածոտն» ՋՕԸ-ի՝ Ապարան եւ Ծաղկահովիտ համայնքների, եւ Արագած եւ Լեռնագյուղի վարչական տարածքների հողատարածքների ոռոգման համար Գեղարոտ գետից եւ Ծիլքարի ջրամբարից՝ համապատասխանաբար՝ 168.7 լ/վ եւ 28.86 լ/վ ջրառ իրականացնելու, ջրօգտագործման թույլտվությունների ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17-ից - 18-ը, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ կառավարական 3-րդ տուն՝ 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2023 թվականի նոյեմբերի 6-ին՝

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ժամը 16:00-ին, կառավարական 3-րդ տուն՝ 5-րդ հարկ՝ 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

Շրջակա միջավայրի նախարարության՝ Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N 217-Ն եւ 03.08.2023թ. N 1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է «Արագածոտն» ՋՕԸ-ի՝ Արուճ, Լեռնարոտ, Վ. Սասունիկ, Ավան, Աղձք, Տեղեր, Օրգով, Կոշ, Ուշան, վարչական տարածքների հողատարածքների ոռոգման համար Ամպուր գետ՝ Ամբերդի մայր ջրանցքով՝ 8485.6 հազ. մ3 եւ Բյուրական եւ Անտառուտ համայնքների հողատարածքների ոռոգման համար Ամպուր գետ՝ Բյուրականի մայր ջրանցքով՝ 293 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվությունների ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-ից - 18-ը դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ կառավարական 3-րդ տուն՝ 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2023 թվականի նոյեմբերի 6-ին՝

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ժամը 16:00-ին, կառավարական 3-րդ տուն՝ 5-րդ հարկ՝ 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Մոսկվայի՝ Ալեքսանդր Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանում հոկտեմբերի 31-ին բացվում է «Ուրարտուի թագավորությունը. հին Հայաստանի ժառանգությունը. Ուրարտու - Հարմինույա - Արմինա» ցուցահանդեսը: Դրան մասնակցել են յոթ թանգարաններ՝ Ռուսաստանից եւ Հայաստանից: Այդ մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՏԱՍՍ գործակալությունից:

«Բացում ենք ցուցահանդես՝ նվիրված Ուրարտու պետությանը... այս նախագիծը պատրաստվել է մի քանի թանգարանների՝ Պուշկինի անվան կերպարվեստի պետական թանգարանի, Հայաստանի պատմության թանգարանի եւ այլ գործընկերների հետ համատեղ», - ասել է Պուշկինի անվան թանգարանի տնօրեն Ելիզավետա Լիխաչովան:

Ցուցահանդեսը բաղկացած է չորս բաժիններից, որոնցից երեքը նվիրված են այդ տարածաշրջանի պատմության եւ մշակույթի զարգացման տարբեր փուլերին. Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերի նախաուրարտական ավանդույթից մինչեւ մ.թ.ա. հետուրարտական շրջանի (մ.թ.ա. VI-IV դդ.) հին հայկական արվեստի ձեւավորումը: Ցուցահանդեսի հիմքը կազմում է Ուրարտուի թագավորության՝ 1-ին հազարամյակի հին արեւելյան գլխավոր պետություններից մեկի՝ մ.թ.ա. IX-VII դարերի ժառանգությունը:

Ցուցահանդեսում առաջին անգամ կներկայացվեն Կայսերական Ռուսաստանի օրոք իրականացված ամենաառաջին պեղումներից արտեֆակտներ, ինչպես նաեւ 2010-ական թվականներին պեղումների ժամանակ հայ հնագետների կողմից հայտնաբերված հուշարձաններ: Ցուցահանդեսի վերջին բաժինը նվիրված է Պուշկինի թանգարանում Ուրարտուի մշակույթի ուսումնասիրությանը:

Ցուցահանդեսը նվիրված է արեւելագետ, Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանի Հին Արեւելքի բաժնի վարիչ Սվետլանա Խոջաշի ծննդյան 100-ամյակին:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԱՌԱՔԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՑ ⇨

2023 թվականի՝ ազատ ոճի ըմբշամարտի մինչեւ 23 տարեկանների աշխարհի եւ Եվրոպայի մեծահասակների չեմպիոն Վազգեն Թեւանյանը հոկտեմբերի 27-ին դարձավ 24 տարեկան: Ըմբիշը ծննդյան տարեդարձը նշել է Ֆրանսիայում՝ Փարիզում: Ավելի ուշ մարզիկի ինստագրամյան էջից տեղեկացանք, որ նա սիրելիին ամուսնության առաջարկություն է արել հենց էյֆելյան աշտարակի մոտ: Նրա ընտրյալը Սոնա Մաթեւոսյանն է:

Հիշեցնենք, որ Վազգենը «Ժողովուրդ» օրաթերթի «Սպորտի ետնաբեմից» խորագրով շարքի շրջանակներում պատմել էր իր ծննդյան ամսաթվի եւ անվան կապի մասին՝ ասելով. «Իմ անունը հայրս ու հորեղբայրս են ընտրել: Ծնվել եմ 1999 թվականի հոկտեմբերի 27-ին, եւ հենց այդ օրվա դեպքերի, իրադարձությունների հետ կապված՝ինձ անվանակոչել են Վազգեն՝ի պատիվ Վազգեն Սարգսյանի»:

Հավելենք նաեւ, որ Թեւանյանը վերջերս Բելգրադում կայացած աշխարհի առաջնությունում 3-րդ տեղն է գրավել եւ նվաճել՝ 2024 թվականի Փարիզի Օլիմպիական խաղերի ուղեգիր:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԸՆԿԵՐՆԵՐԸ՝ ՄԵԹՅՈՒ ՓԵՐԻԻ ՄԱՍԻՆ

«Ընկերներ» կուլտային սերիալի դերասանական կազմը սգում է իրենց նախկին գործընկեր Մեթյու Փերիի կորուստը:

CNN-ին տրամադրված համատեղ հայտարարության մեջ Ջենիֆեր Էնիսթոնը, Քորթնի Քոքսը, Լիզա Քուդրոուն, Դեյվիդ Շվիմերը եւ Մեթ Լեբլանը գրել են. «Մենք անասելի ցնցված ենք Մեթյուի կորստից: Նկարահանման հրապարակում մենք ավելին էինք, քան, պարզապես, գործընկերներ: Մենք ընտանիք էինք: Այնքան շատ բան կա, որ ուզում ենք ասել, բայց այժմ ժամանակ կհատկացնենք այս անժամանակ կորուստը վերանայելու համար: Ժամանակի ընթացքում ավելին կասենք, երբ կարողանանք: Այս պահին մեր մտքերն ու սերը Մեթիի ընտանիքի, ընկերների եւ բոլոր նրանց հետ են, ովքեր սիրում էին նրան ամբողջ աշխարհում»:

Փերին մահացել է անցած շաբաթ օրը Լոս Անջելեսի իր տանը: Նա 54 տարեկան էր: Դերասանը 1994-ից 2004 թվականներին նկարահանվել է NBC-ի Friends/«Ընկերներ» սիթքոմում՝ մարմնավորելով Չենդլեր Բինգի՝ հմայիչ եւ հեգնական երիտասարդի կերպարը: Շոուն իր ժամանակներում ամենահայտնիներից էր, եւ մինչ օրս շարունակում է գրավել երիտասարդ լսարանին: Իր դերի համար Փերին 2002 թվականին նոմինացվել էր «Էմմի» մրցանակի, իսկ 2021 թվականին նա առաջադրվել էր նաեւ որպես HBO Max-ի հատուկ՝ «Ընկերներ. վերամիավորում» ֆիլմի գործադիր պրոդյուսեր: Կիրակի օրը «Ընկերներ»-ի համահեղինակներ Մարթա Քաուֆմանը եւ Դեյվիդ Քրեյնը, ինչպես նաեւ գործադիր պրոդյուսեր Քեւին Բրայթը նույնպես հանդես էին եկել ցավակցական խոսքով՝նշելով, որ «ցնցված եւ խորապես վշտացած են սիրելի ընկեր Մեթյուի մահից»:

«Մենք միշտ կգնահատենք այն ուրախությունը, թեթեւությունը եւ հնարամտությունը, որը նա դնում էր ոչ միայն իր աշխատանքի, այլեւ կյանքի ամեն պահի մեջ: Նա միշտ սենյակի ամենազվարճալի մարդն էր: Նա առատաձեռն էր ու անձնազոհ... Մեր սրտերն, իսկապես, կոտրված են»,-ասվում է հայտարարության մեջ:

«Ընկերների» դերասանական կազմի միջեւ եղած քիմիան դուրս էր եկել նրանց էկրանային խաղի սահմաններից: Դերասանները կապը պահում են 2004 թվականից՝ շոուի ավարտից ի վեր:

«Նրանք շատ սիրելի են ու համախմբված»,-ասել է Փերին 2021 թվականին՝ Entertainment Tonight-ին տված իր հարցազրույցի ժամանակ,-«Երբ մենք տեսնում ենք միմյանց, դա շատ հուզիչ հանդիպման է վերածվում»,-հավելել է նա:

ՍՊՈՐՏ

ՀԵՐԹԱԿԱՆ «ՈՍԿԵ ԳՆԴԱԿԸ»

Արգենտինայի ֆուտբոլի ազգային թիմի եւ Մայամիի «Ինտեր»-ի ֆուտբոլիստ Լիոնել Մեսին 8-րդ անգամ նվաճեց «Ոսկե գնդակ»-ը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ «France Football»-ի պարբերականի կողմից տրվող ֆուտբոլի ամենահեղինակավոր մրցանակը ռեկորդային՝ 8-րդ անգամ արժանացավ «Ոսկե գնդակ»-ին:

Լիոնել Մեսին «Ոսկե գնդակ»-ի արժանացել էր նաեւ 2009, 2010, 2011, 2012, 2015, 2019, 2021 թվականներին:

Տարվա լավագույն երիտասարդ ֆուտբոլիստը Ջուդ Բելինգեմն է, Մադրիդի «Ռեալ»-ի բրազիլացի հարձակվող Վինիսիուսը արժանացել է Սոկրատեսի անվան մրցանակին (այն տրվում է մարդասիրական գործունեությամբ զբաղվող ֆուտբոլիստներին), լավագույն դարպասապահ՝ Լեւ Յաշինի անվան մրցանակին արժանացել է Արգենտինայի հավաքականի եւ անգլիական «Ասթոն Վիլայի» դարպասապահ Էմիլիանո Մարտինեսը, իսկ Գերդ Մյուլերի անվան մրցանակը (տրվում է ամենաշատ գոլեր խփած ֆուտբոլիստին) արժանացել է Էրլինգ Հալանդը: Կանանց ֆուտբոլում «Ոսկե գնդակին» արժանացել է Կատալոնական «Բարսելոնայի» կանանց թիմի կիսապաշտպան Աիտանա Բոնմատին:

Հավելենք նաեւ, որ աշխարհի չեմպիոն, Արգենտինայի հավաքականի եւ ամերիկյան «Ինտեր Մայամիի» 36-ամյա արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսին ավելի շատ «Ոսկե գնդակ» է ստացել, քան որեւէ այլ երկրի բոլոր ներկայացուցիչները միասին, հաղորդում է ESPN-ը:

Մեսին 8-րդ անգամ արժանացավ աշխարհի լավագույն ֆուտբոլիստի մրցանակին եւ գերազանցեց Գերմանիային, Ֆրանսիային, Նիդերլանդների եւ Պորտուգալիային, որոնց ներկայացնող ֆուտբոլիստներն ունեն 7-ական «Ոսկե գնդակ»:

1956-1994 թվականների «Ոսկե գնդակը» ստանում էին միայն եվրոպական երկրները ներկայացնող ֆուտբոլիստները:

Արգենտինացի հարձակվողը ոչ Եվրոպական առաջնություն ներկայացնող առաջին ֆուտբոլիստն է, որն արժանանում է այս մրցանակին:

Ո՞Վ Է ՈԳԵՇՆՉՈՒՄ

«Ոսկե գնդակ» մրցանակաբաշխությունում աշխարհի լավագույն երիտասարդ ֆուտբոլիստի (մինչեւ 21) մրցանակին արժանացած 20-ամյա անգլիացի կիսապաշտպան Ջուդ Բելինգեմը («Ռեալ Մադրիդ») նշել է, թե անցյալի որ ֆուտբոլիստն է իրեն ոգեշնչում:

«Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել այս մրցանակի համար: Ջիդանն այն ֆուտբոլիստն է, որը ոգեշնչում է ինձ: «Ռեալում» նրա խաղային համարը (5) վերցնելը դրանով է պայմանավորված: Բայց ես դեռ երկար ուղի պետք է անցնեմ, որպեսզի հասնել Ջիդանի արածին»,- Բելինգեմի խոսքը մեջբերում է Marca-ն:

Բելինգեմն այս ամռանն է Դորտմունդի «Բորուսիայից» տեղափոխվել Արքայական ակումբ: Նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2029թ. հունիս:

● *Նոյեմբերի 2-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Թռիչք կկվի բնի վրայով» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՁԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Արդյո՞ք ՀՀ ֆաղաքացիությունից հրաժարվելու դարագայում հնարավոր է խուսափել դարտադիր զինորական զինծառայությունից:

Արտակ Նիկողոսյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Զինվորական հաշվառումից հանվում են օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած անձինք:

Քաղաքացիները պարտավոր են զինվորական հաշվառման, ինչպես նաեւ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար ներկայանալ իրենց հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ: Պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո բոլոր զորակոչիկները պարտավոր են ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նրանք հաշվառված են: Զինվորական ծառայությունից պահեստ արձակված քաղաքացիները պարտավոր են յոթն օրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ՝ զինվորական հաշվառման համար: Հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրը փոխելու դեպքում զինապարտները զինվորական հաշվառման կանգնելու համար պարտավոր են ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ՝հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) նոր վայր ժամանելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում:

ՀՀ ՊՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Զինվորական ծառայության ընթացքում դատապարտված եւ ազատազրկման ձեւով պատիժ կրած անձինք պարտավոր են պատժի կրումից ազատվելու պահից յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ: Զինապարտներն իրենց առողջական վիճակի, ընտանեկան դրության, հաշվառման (հաշվառում չունեցողները՝փաստացի բնակության) վայրի, կրթության, աշխատավայրի եւ պաշտոնի փոփոխությունների մասին պարտավոր են յոթնօրյա ժամկետում հայտնել հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԱՌԱՔՈՒՄ

ՀԱՐՑ. Ի՞նչ տեսակի առաքանիներ է սպասարկում «ՀայՓոստ»-ը:

Նաիրա Պողոսյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «ՀայՓոստ»-ի միջոցով կարելի է ուղարկել եւ ստանալ.

- նամակներ
- բացիկներ
- փաթեթներ
- ծանրոցներ
- մանր կապոցներ
- սեկոգրամներ
- Մ- միջազգային պարկեր

Մ-միջազգային պարկը մեկ հասցեով ուղարկվող, մինչեւ 30 կգ քաշով տպագրական նյութ է (թերթեր, ամսագրեր, հրատարակչական պարբերություններ, գրքեր եւ այլն):

Սեկոգրամը բացառապես կույրերի համար նախատեսված փոստային առաքանի է, որը հանձնվում է բաց տեսքով, սեկոգրաֆիայի եղանակով գրված նամակագրական հաղորդակցություններով եւ հրատարակություններով, սեկոգրաֆիայի նշաններով՝ կլիշեներով, ձայնագրություններով, տիֆլոտեխնիկական միջոցներով:

Փաթեթով ուղարկվում են մինչեւ 2 կգ քաշով տպագրական նյութեր, գործարար թղթեր եւ այլ փաստաթղթեր:

«ՀայՓոստ» ՓԲԸ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մանր կապոցը պատվիրված փոստային առաքանի է, որի միջոցով ուղարկվում են մինչեւ 2 կգ քաշով նվերներ, հուշանվերներ, եզակի նմուշներ եւ այլ մանր իրեր:

Ծանրոցը առավելագույնը 20 կգ թույլատրելի քաշով առաքանի է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում ավարտված ըմբշամարտի Մ23 տարեկանների աշխարհի առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչ, հունահռոմեական ոճի ըմբիշ Շանթ Խաչատրյանը բրոնզե մեդալ է նվաճել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 + 8 +11 + 16
Կոտայքի լեռներ	+ 4 + 8 +10 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 9 + 11 +17 + 20
Գեղարքունիք	+ 3 + 7 + 8 + 13
Լոռի	+ 8 + 13 +18 + 23
Տավուշ	+ 10 + 15 +20 + 25
Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 9 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 10 + 18 + 21

Արարատ	+ 9 + 12 +22 + 24
Արմավիր	+ 8 + 10 +21 + 23
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 6 +12+ 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +21 + 23
Սյունիքի հովիտներ	+14+ 18 +21 + 25
Սյունիքի նախալեռներ	+ 7 + 12 +17 + 21
ԼՂՀ	+ 13 + 17 +21 + 25
Երեւան	+11+ 13 +20 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.10.2023**
Հասցեն՝ Գերաբունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Դանիելյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*